

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ԱՇՈՏ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ
(Պատմական գիտ. քեկնածու)

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԳՐԶԱԳԻՐ ՄԱՆՐ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պատմագիտական բովանդակություն ունեցող գրչագրերում մեզ հաճախ են պատահում մանր ժամանակագրություններ, որոնք գրվել են դանազան ժամանակներում տարբեր գրիչների կողմից: Այդ ժամանակագրությունները արժեքավոր նյութեր են պարունակում ոչ միայն հայ ժողովրդի, այլ և վրացի, ադրբեջանցի, ժոնդուր, սելջուկ, պարսիկ և Արևելքի այլ ժողովուրդների պատմության համար: Նրանց մեջ նյութեր են հանդիպում անգամ հեռավոր Հնդկաստանի պատմությունից: Քաղաքական գեղեցիկն ուշագրությունը հետևող հայ գրիչը կամ ճանապարհորդն անհրաժեշտ է համարել իր ձեռագրի չգրված էջերում ժամանակագրական կարգով արձանագրել իր ժամանակի կարևոր գեղեցիկը՝ շատ գեղքում համեմատությամբ չհիշելով իր անունը:

Այդ արժեքավոր նյութերը մինչև այժմ, դժբախտաբար, մասնագիտական հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել: Նրանցից շատ քչերն են հրատարակված: Այժմ, նրանց ի մի հավաքումը, ժամանակագրական կարգով դասավորումը, մշակումը և հրատարակումը այնքան կարևոր մի գործ է, որքան կարևոր է ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունը: Սակայն այդ աշխատանքը—

երկար ժամանակ պահանջող աշխատանք է: Մինչ այդ՝ պատմական տարբեր շրջաններում ու տարբեր թեմաներով գրադավող մասնագետներին՝ գրչագրերում կգած այդ նյութերը՝ իրենց ուսումնասիրությունների ժամանակ մատչելի դարձնելու համար, Մատենադարանն անհրաժեշտ համարեց հրատարակել ներկա համառոտ բերվող փախ:

Ժամանակագրություններն այստեղ դասավորված են ըստ գրչագրերի համարի: Սակայն այդ դասավորումը պայմանական է, որովհետև գրչագրերում կգած բոլոր ժամանակագրությունները չէ, որ հայտնի են մեզ և, պարզ է, որ հետագա աշխատանքի ընթացքում նորից կհավաքվեն նման ժամանակագրությունների աննոտացիաներ, որոնք և կդասավորվեն ու կտրվեն համարական նոր խմբով:

Առանձին ժամանակագրությունների հրատարակությունների վրա մենք կանգ չենք առել, որովհետև մեր նպատակը չի կղել տալ նրանց ազդիր բերվող փախ: Գիտենք, օրինակ, որ Հովհաննես Դրասխանակերպուց, Մովսես Երզնկացու, Մարտիրոս Ղրիմեցու և ուրիշների ժամանակագրությունները հրատարակվել են:

Ա. Ա.

№ 82 [է 4] Ժամանակագրություն բնդհա-
նուր պատմության:

Հեղինակը նսայի վրդ. Թոթաթյին է:
Այդ երևում է ժամանակագրության հե-
տևալ պարբերությունից. «Ի թուին հայոց
1209, յունիսի 2 օրն, ցարեկեան 2 սհաթ և
կէսին արեղակն խաւարեցաւ այնքան, մինչ
եղև գիշեր... և եկաց կէս ժամի. և ապա
եցոյց զայն սակաւ առ սակաւ. էի յայն-
ժամ նսայի վարդապետ (ընդդուումը մերն
է.—Ա. Ա.) Ի Թոթաթ» [էջ 487]:

Ժամանակագրությունը վերնագրված է.
«Արդ պարս և գիսել արեմն քե որբան ամբ
անցեալք են ի սեղծմանե աշխարհի և ի
ժամանակս նախնեաց և զքիւս տաբեց նա-
ցա...»:

Ժամանակագրությունը սկսվում է Ազա-
մից՝ մեջ ընդ մեջ հիշելով հայ տոհմապետ-
ներին և թագավորներին ու նրանց զոր-
ժուները:

Հնագույն շրջանի ժամանակագրությու-
նը նա հասցնում է մինչև «ստեղծագործու-
թյան» 3925 թվականը. («Հիրօղէս ալ[լ]ադ-
գի եղև առաջին թագաւոր հրէից ամին
3925») ու սկսում մեր թվագրությունից՝
«402—Հոս առաւ ի Գոթադուր: 402. Ֆէ-
սաժօնդոս եղև առաջին թագաւոր Գալիաց-
ուց: 421. եղև զկիսն շինուածոյն Վենէտի-
կոյ» [էջ 481]:

Ժամանակագիրը կանգ է առել նաև ա-
սանձին կատարելագործությունների վրա,
այսպես՝ «Յօճաննէս Կօրէնպէրն եզիս դապի
գրութիւնն ի Մանկոնցայ». [էջ 481]: «1582.
գտին գարհաս թօփ և թֆանկի. այս գործ
նախ քան զամենայն յառաջ Վինտիկցիք
ի կիր առին ընդդէմ Չէնուիզացուց» [էջ
482], «Գտեալ եղև նոր աշխարհ՝ որ է յԱ-
րևտական Հրատան ի Բրիտանիոյ Կօ-
լումպէ Չենուադուց 1583 թ.: Եւ այլք ա-
սեն թէ՛ ի թուին Բրիտանի 1497 թ. Ամե-
րիկոս Վէսպիճնոսն եզիս դնոր աշխարհն
Հնդկաց...» [էջ 482]: Ժամանակագիրը որոշ
տեղերում կանգ է առել իր կարծիքով ար-
տակարգ կարևորություն ունեցող փաս-
տերի վրա:

«1498. Ի Մելան, և ի նոյն ժամանակի
ճնաւ կին մի ի յԱրամանս զորդի, զոր ու-
նէր երկու գլուխս, զչորս ձեռս և զվեց ա-
կանջս Եւ կին մի եղև ընդ առն իւրում
զամս 10 և յետոյ փոխեցաւ ի բնութիւնէ
կանայի և եղև այր ամենայն անդամօք»
(էջ 483):

«1566... Եւ ի նոյնում ամի ի երկիրն
Ինկլիզաց լեռն մի մեծ վերացաւ ի տեղում
իւրմէ և եկաց յայլում տեղի» (էջ 483):

«536 ? (հավանական է 1536) Իտալիա
եղև սով մեծ՝ մինչ զի մարդկք զմիմիանս
ուտէին. և ճնօղքն՝ զգաւակս» (էջ 483):

532 ? (հավանական է 1532) Ի Մելան
եղև սով միծ, մինչ զի կանայք զորդիս
իւրեանց կերան» (էջ 485):

«1408 թուին եղև այնպիսի անձրև Իտա-
լիայ, մինչ զի 400,000 մարդիկք ջրատուգ-
եալք մեռան և բազում զիւղորայք քակ-
եալք աւերեցան» (էջ 483):

«1515 Սուլթան Սէլիմն ձերբկալ արար
զՄարա սուլթանն. և էսս զամենայն թա-
գաւորութիւն նորա» (էջ 483):

«1541 Հինգերորդ Կարլօ թագաւորն մե-
ծաւ զօրութեամբ գնաց ի վերայ Չաղայի-
րին՝ զմեծ նաւակոծութեանս 70 նաւք ըն-
կզմեցան և դարձաւ յետս» (էջ 483):

Ժամանակագրությունը վերջանում է
1209 [=1760 թվի], հունիսի 2 արեղակի
խաղաբուծով՝ (տես էջ 498):

Չեապիրն ընդօրինակված է 1770 թ.:

№ 84 (է 53) Ժամանակագրական փաթեթիկ
ցանկ՝ մի բանի հայ մատենագրերի
մանվան: Վեցնագրված է. «Վարդապե-
տաց [վախճան]ից»:

Սկսում է ներսես վարդապետի մահվա-
նից. «Հանգաւ... ներսէս վարդապետն ի
վանս Գրաճորոյ թվ. հայոց ՉԼԳ (=1284):

... Յովհաննէս Որտանեցին՝ ՊՂԵ (=1426):

... Չարբարիս կաթողիկոսը ... թվ ՊԽԵ
(=1396): Ընդամենը կես էջ է՝ տեղա-
փոխված թերթ Կառմ:

Ընդօրինակված է 1284—1396 թ. միջև
ընկած ժամանակաշրջանում:

№ 227 (է 538) Ժամանակագրություն Հայ կաթողիկոսների:

Վերնագրված է. «Կաթողիկոսք Հայոց և ամբ և քիւբ նոցա»:

Սկսում է Լուսավորչից. «Ա... Լուսաւորիչ ամս 1 ... » (թերթ 69 ր): Հաջորդական հետեւողականութեամբ շարադրելով կաթողիկոսների ժամանակագրութեանը՝ հասցնում է մինչև Գրիգոր Անավարդեցին (1297 թ.) «ՀԱ. Ստեփաննոս Հոռովկայեցին... և այժմ է աէր Գրիգոր Անավարդա եպիսկոպոսն ...»): Ուրիշ մեկը շարունակել է կաթողիկոսների այդ շարքը՝ հասցնելով մինչև Միքայիլ Սերաստացին [1545—1567]:

Չեռագիրն ընդօրինակված է 17-րդ դարում:

№ 462 (է 441) Ժամանակագրություն այն հայ հեղինակների, որոնք գրել կամ մեկնել են առանձին աշխատություններ:

Վերնագրված է. «Վասն մեկնյաց առաւածային գրոց ի մեռոց վարդապետացն՝ քե ով ոք է արտեալ»:

Սկս. թերթ 217 ա «Անանիա վարդապետն ի Սանահին վանացն՝ այր հանձարեղ զխոզ առարական արհեստին, էր ի ժամանակս Պետրոս կաթողիկոսին և հրամանաւ նորա ի մի հաւաքեալ զբանս Եփրեմի և Յովհաննու Ոսկերեւանին և Կիւրղի և այլ սրբոց...»:

Ժամանակագրութեանը արված է ընդհանուր ձևով՝ առանց հիշելու առանձին հեղինակների կոնկրետ ժամանակը: Հիշված է միայն մի քանի հեղինակների անունները:

Ընդօրինակված է 18-րդ դարում:

№ 481 (է 484) Ժամանակագրություն Օսմանյան պատերազմի, (1232—1621 ր. ր.):

Վերնագրված է. «Ասման օղլու կարգն այս է որ կոչին եսնդար»:

Սկ. թերթ 67 ր՝ «Ռաման Օղլու կարգն ու սկիզբն որ ելեալ են և բազմացեալ բազում քաղաքաց և դաւառաց տիրեալ և թաղաւորեալ հայոց թվիս. ՈԶԱ. (1132 թ.):

Սկսելով Օսման 8-ից հաջորդականութեամբ թվում է տաճիկ սուլթաններին

(Աւրխան սուլթան, Մահմադ սուլթան և այլն): Այնուհետև արված է համառոտ ձևով որոշ սուլթանների աչքի ընկնող գործունեութեանը, այսպես՝ «Սուլթան Սէլիմն թագաւորեաց. բազում զօրօք գնաց ի վերայ շահ Իսմայէլին: Եւ պատերազմեցաւ ի Չալարան. և ոչ կարաց առնել գնաւ: Դարձաւ յետ և էառ զԿամախ. Ջի՛. Թվին: Ջի՛. Թուին էառ զԱմիթ... ՋՋ՛. Թվին սուլթան Սիւլեյմանն բազում զօրօք ել և գնաց ի վերայ շահ Դահմաղին ի Թաւրէզ. և ոչ կարաց յաղթել գնաւ. դարձաւ էառ զԲարեւոն՝ որ է Պաղատ» (թ. 61 ր):

Հիշվում է սուլթան Մուրադի՝ Անդրկովկասի և Պարսկաստանի որոշ շրջանները նվաճելու փաստը. «Եւ այս թագաւորս սուլթան Մուրադն առաքեաց բազում զօրս ի վերայ պարսից աշխարհին և էառ՝ զԹօրէժ, և զԵրևան, զԿանձայ, և զԱրշաղ, և զՇամախի՝ մինչև ի Դուռն Ալանաց, զոր եղեալ է Աղէքսանդր Մակեդոնացին» (թ. 68 ա):

Ժամանակագրութեանը վերջանում է սուլթան Օսմանի դեպի Լեհաստան սկսած արշավանքով. «Ռ՛. Գնաց ի վերայ լեհաց պատերազմ սուլթան Աւսմանն՝ հանդերձ թաթար խանին. և դարձան բազում զիրեաւ. և պեղամայ արարին ամենայն երկիր նորա ի յայս միս մի (?) աստուած էառ զվրէժ վերեացն ի սուլթան Աւսմանէն՝ յարեալ զօրքն ի վերայ և սպանին. և թաղաւորցուցին զսուլթան Մուստաֆան, զօրիգբայր նորին՝ հանեալ ի յարգելանոցէն» (թ. 68 ր):

Չեռագիրն ընդօրինակված է 1621 թ.:

№ 482 (է 476) Ժամանակագրություն հայոց Բագրատունյաց և Ռուբենյան իշխանների և քաղաւորների և հետագա շրջանի (հասցված է մինչև 1297 ր.):

Վերնագրված է. «Յաղագս ժամանակի իշխանաց և քաղաւորացն՝ որք ի Սիս. տիրեցին»:

Սկ. թերթ 13 ր. «Նախ և առաջին Ռուբեն հղբայր Գագկայ իշխանին, ի ցեղէն Արշակունեաց, էառ զԿիլիկիայ ի թուին հայոց ՆՂ՛»:

Երեսի երեք քառորդի չափով՝ տալով Ռուբինյանների ժամանակագրությունը, ժամանակագիրն անցնում է Չաքարյաններին. «Ոխդ. Չաքարիայ սպասարան էառ զԱնի և տիրեաց նմայ»:

Այնուհետև դառնում է դեպի Բագրատունի թագավորների ժամանակը և նորից անցնում վրացական տիրապետության շրջանին: Վերջացնում է 1297 թվականով. «Ի թվին. Չխդ. էր՝ աշխարհակալ Ղաղանն...»:

Չեռագիրն ընդօրինակված է 1711 թվին Կոստաս սարկավազի կողմից:

№ 482 (է 485) Տարեգրություն բնդհանուր պատմության:

Վերնագրված է. «Մասնաւոր ժամանակագրութիւն և գաւազանագիրք սկսեալ ի բուականութեան մարմնատիկ անօրէնութեան տեառըն մերոյ Յիսուսի Քրիստոսի հաղաբորդին, ինն յորելի և երիւք թուովք աւելի (=1456): Իսկ արամեանս աստարի ետից երբակ հարիւրի (=3×300+551=1451 թ.). և անդուստ հաւաքեալ և վիպարանեալ մինչև նարդեանս ամանակի, որում գիրս գրեցի...»:

Տարեգրությունը շարադրում է Անեցու հետևողականությամբ, երեք աղյուսակներում, որոնցից առաջնում տրված է մեր ներկա դործածական թվականը, երկրորդը—հայ կաթողիկոսների ժամանակը, իսկ երրորդը—Հայոց թվականը: Համապատասխան թվականի առջև աջ ու ձախ կողմերում շարադրվում են պատմական փաստերը:

Տարեգրությունը սկսում է Չհանշահի նվաճումների հիշատակությունից. «ՌՆԾԶ. Ճհանշէն, որդի Ղարայ Ուսուֆին, գնացեալ էառ՝ զՀամատան, զՍաւայ, զՍսպահան, զՌէ, զՂազվին, զԳիլան, զՔանան, զՇիրազ, զՔըրման, զՊորասան, և զքաղաքս անթիւս բազումս» (թերթ 44ա):

Տարեգրության մեջ հիշված է մի շարք խաների, սուլթանների ժամանակը, նրանց դործունեությունը, արեղակի խաղարումները, երկրաշարժեր և այլն:

Տարեգրությունը վերջանում է Թարվիզի նվաճումով և Արրահամ Թաքիրզադու կաթողիկոս ձեռնադրումով. «ՌՃՀԹ կրկին յեառին պարսիկք զքաղաքն Թարեզ. ՌՃԶԳ. օծաւ կաթողիկոս երկրորդ Արրահամ վարդապեան Թաքրտադցի»:

№ 503 (է 533) Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության Մովսեսի Երզնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորաց հայոց, զոր կարգեաց Մովսէս եօրեմացիին»: Խորհնացու պատմությունից վերցրած ու համառոտած հայ թագավորների ժամանակագրությունն է: Սկսվում է սովորականի նման՝ «Մովսէս Խորհնացի զշարս թագաւորացն հայոց այսպէս դասէ...» (թերթ 161):

Ընդօրինակված է 160 թ. Պոլսում Ավետիս կաթ. ի կողմից:

№ 576 (է 535) Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության Մովսես Երզնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորացն հայոց, զոր կարգեաց Մովսէս եօրեմացիին»: Սկսում է «Ճարս քաղաւորացն հայոց այսպի կարգի.

Յարեթ, որդի Նոյի.
Գամեր:
Թիրաս...» (թերթ 158ա):

Վերջանում է. «... ապա Հեթում յազգէ նորա. և յեա նորա որդի նորայ Լեոն. և էին որդիք է (=Լօթն), որ ընդ միմեանս մարտուցեալք. և մնաց միայն Օշինն, որ այժմ ունի զթագաւորութիւնն» [թերթ 161ա]:

Չեռագիրն ընդօրինակել է Պետրոս քահանան Երզնկայում:

№ 579 (է 540) ժամանակագրություն հայ կաթողիկոսների՝ կազմված Հովհաննես Դրասխանակեթցու կողմից:

Վերնագրված է. «Յովհաննէս կաթողիկոսի»: Սկսվում է թերթ 74 բ-ում «Յեա առաքելոցն սրբոյ Բարթողեմէոսի և Թադէոսի, որք վիճակեցան ի տեառնէ քարոզք

և աւետարանիչք Ազգանազեան գրոհի և վարդապետք Բրիստոսի աստուածաշարժութեանն...»:

Ժամանակագրությունն ընդհատվում է Եզրայի կաթողիկոսության թվահամարի վերջում «ի ՃԾԲ. ի թուականութեանն կացեալ սորա ի յաթոս հայրապետութեանն» (թերթ 76 ր):

Շարունակվում է թերթ 197 ր-ում «Տէր Յովհաննէս ի Տաշրայ, ի գեղջէ Աւձունոյ...»: Ժամանակագրությունը վերջանում է իրեն, Իրասխանակերպոս կաթողիկոսությամբ՝ «Հուսկ [յետոյ հ]էկս ես և թշուառուականս («ս»-ն գրված է վերելում) Յովհաննէս, հայրենաւք ի մեծ դաստակերտէն Իրասխանակերտէ ըն՛Բալա զսոյն աւտիճան ՅևԲ թուականին...»:

Ժամանակագրությունն ընդօրինակող զրիչը, Ներսեսը, ինչպես երևում է, ընդօրինակման ժամանակ իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի մի ձեռագիր, որի թերթերը խառնված են եղել, այլապես ժամանակագրությունը թերթ 197 ր-ում ընդօրինակվել չէր կարող:

Ձեռագիրն ընդօրինակված է 1276 թ.:

№ 582 (Կ. 530) Ժամանակագրություն մանրոյ խառնի (1263—1311 ր. ր.):

Վերնագրված է. «Կարգ էլխաների»: Սկս. թերթ է 152 ր՝ «ՈՂԸ. Հուրաուն: ՉԺԲ. Արազան: ՉԼԱ. Ահմասն: ՉԼԱ. Արդուն: ՉԽ. Բաղաթան: ՉԽԱ. Բայտոզան: ՉԽԳ. Ղազան: ՉԽԶ. Մահմասն: ՉԿԵ. Բուսախան: ՊԷ թուլթամիշ դան Ղուիմին»: Տալիս է այնուհետև հետաքրքիր տեղեկություններ խաների գործունեության մասին, այսպես՝ Թոխթամիշն «առաքեաց զօրս ի Դաւրէժ և ի բլւր գերի տարաւ», «Պլե. Թամուր եկաւ ի Դաւրէժ և ի Նախչվան և կոտորեաց աւելի քան ԴՌ մարդ»: Նույն Թամուրը «ՊԽԹ. դարձեալ եկաւ ի վերայ վրացիին և էառ գերի և զնաց յաշխարհն իւր և սատկեցաւ» և այլն: Ժամանակագրությունը վերջանում է ՉԿ (=1311) թվականով՝ «Գնաց Հեթում ի դան Ղազան. ել հրամ[ան] ի դանէն՝ աւերել զհեղեղեցիս: Մեաւ հեթում ՉԿ» (=1311)»:

Ժամանակագրության հեղինակը հայանի չէ: Հավանական է, սակայն, Կիրակոս բանասերի աշակերտներից մեկը լինի, որովհետև ժամանակագրության վերջում նույն գրչությամբ կա այսպիսի մի հիշատակագրություն. «Բ՛ս ա՛ծ որսրմեաց Կիրակոս Բանասէրին...» (154 ր):

Ձեռագիրն ընդօրինակված է 15-րդ դ.:

№ 605 (է 586) Ժամանակագրություն հայոց քաղաքների և հոռմեա-քյուզանդական կայսրների: [Ազամից մինչև Փոկաս կայսեր ժամանակ]:

Վերնագրված է. «Ծնունդք Ազամայ քիւք ևնցին»: Սկ. թ. 217 ա՝ Ազամ ևկաց ՄԼ աժ և ծնաւ զՍէթ. Սէթ աժս ՄԵ միաւորեա և լինի ՆԼԵ...»:

Թ. 219 ա՝ «Թագաւորք հայոց ի Նոյէ...»

Յարեթ: Գամեր: Թիրաս...»:

Թ. 220 ա՝ «Հոռոմաց քաղաւորք:

Գայրոս. Յուլիոս: Առաջին Թագաւորք հոռոմաց կալաւ աժս Ե...»

Վերջ. թերթ, 221 ր՝ «Յուստանոս ԼԹ, Տիրեր՝ Ե. Մաւրիկ՝ Ի. Փովկա՝ Ը. Մինչև ի գալն յՈրմըզդան արքայից արքայի»:

Ձեռագրի գրչությունը 17-րդ դարի է: Գրիչը—Կիրակոս արեղան է:

№ 605 (է 586) Անխորագիր ժամանակագրություն (1018—1070 ր. ր.):

Սկ. թ. 20 ա՝ «Ի թվին հայոց. ՆԿէ. դարթաւ աստուածասասա բարկութիւնն և ևլին աղլն թուրքաց ի վերայ քրիստոնէից ի Վասպուրական...»:

Վջ. թ. 21 ր. «... ՌՃԺԹ ին. Շահ Սուլէյման Թագաւորեաց: Երկնայ շարժըն ԻԸ (? հավանական է ՌՃԻԸ) թուին»:

Մինչև ՌԽԳ թվականի զեպտեմբը նմանվում է № 3078 գրչագրի ժամանակագրությանը: Վերջում, ՌԾԲ (=1603) թվականից մինչև ՌՃԺԹ (=1670) թվականի ժամանակագրությունն, ավելացվել է այլ թանաքով, ուշ շրջանում, այլ գրչի կողմից:

Ձեռագրի գրչությունը 17-րդ դարի է: Գրիչը—Կիրակոս արեղան է:

№ 678 [է 792] Համառոտ ժամանակագրություն ընդհանուր պատմության [1013—1604 p. p.]:

Վերնագրված է. «Այս են քվական տանկաց և այլագգացն»:

Սկ. թ. 177 ր՝ «Ի թվին հայոց նկե. դարդեաւ աստուածասաստ բարկութիւն ի վերայ Բրիստօնիցի...»:

Վերջ. թ. 178 ր՝ «... թվին Ռեթ. մեռաւ Մուրաան. նստաւ որդին սուլթան Մահմատըն: Թվին ՌԾԳ մեռաւ Մահմատան. նստաւ որդին սուլթան Ահմատն»:

Չեռադիրն ընդօրինակել է Մուքիաս Ղափանցին 1673 թ. Հոսիճո վանքում (Ղփչաղ): Նմանվում է № 3078 գրչագրի ժամանակագրությանը:

№ 713 (610) ժամանակագրություն Անդրկովկասի պատմության: Անխորագիր: (1660—1705 p. p.):

Թ. 137 ր՝ «Թիւն. ՌճԹ. էր, որ Թամբաղ խանն՝ շահն գնաց: Թիւն Ռճէ էր, որ յԷռուստամ խանն մեռաւ Վրաց տուն...»:

Վերջ. թ. 138 ա «... Թիւն ՌճՄԳ էր, մարախ ամսոյ ժե, օրն հինիշարթի, Գ. սհաթն, Քեալպալահ խանն Գանճու գուրս եկաւ առ Թագաւոր գնաց փափուղ Աստուառապատաժ սարդար Թուրքման Ատինայ վերայ. վերջն աստուժ գիտէ (Ղուրդին)»:

Ընդամենը երկու էջ է: Փաստերը հետաքրքիր են: Թերթ 138 ր այլ գրչով ավելացրած է ժամանակագրական երկու փոքրիկ տեղեկություններ. «Թիւն ՌճԾԵ, նաւասարդի ուրբաթ օրն, Վալի խանի տղայ Իմում դուլի խանն ի գնայ Թօփղարաղաճն. վերնն այստուժոյ է գիտելի»:

Թիւն ՌճԾԵ. էր, որ Միրզա Ղասուսն գնաց ի Զակամ դօշուն դուրս անիլ. սուրբ աստուածածնի կիրակի օրն եւ Մէլիք Քեամս եկի, որ բանին սուրաթ ավի»:

Գրչությունը 18-րդ դարի է:

№ 737 [է 639] Ոտանավոր ժամանակագրություն հայոց պատմության Մարտիրոս Ղրիմեցու:

Վերնագրված է. «Կարգ ու քիւ բագաւորաց հայոց՝ ոգեալ ի Մարտիրոսէ վարդապետէ»:

Ժամանակագրությունը տրագիցիոն ձևով սկսվում է Նոյից, Հարեթեց և Հայկից՝

«Ազգըս հայոց դատ առանձին,
է ըստուգիւ յԱբեթածին,
Որդւոյ Նոյի նահապետին,
յօրմէ Գոմերն է մեր նախնին» (Թերթ 197 ա)

Լեզենդար շրջանի հայկական նահապետները նկարագրելուց հետո նա անցնում է Արտաշեսյան շրջանի նկարագրությանը:— Տիգրան 2-րդի շրջանը նա ներկայացնում է հետևյալ ձևով.

«Ապա Տիգրան սորա (այսինքն Արտաշեսի—Ա. Ա.) որդին.

Զայն որ կոչին Տիգրան միջին,
սա արշաւէ ի Պաղեստին,
յազթահարէ գՀոսմայեցին:
Որպէս հընոյն Իսրայէլին
դատաւորաց ժամանակին:

Յեա այնորիկ միարանին.
իշխանադունք հայոց ազգին.
և սահմին մարդպանութիւն.
Վարդըն պարոն նըստի նախկին»:

Անցնելով արաբական շրջանին, գրում է՝

«Վարդան պատրիկ դաւօղն յունին.
պարոն Դաւիթն յազգէ նորին.
Թէողորոս սմն յեա Դաւթին.
և Համաղասպն որ ի կարգին»:

Աշոտի որդի Սմբատից հետո՝

«Անտիրանան դարձեալ կրկին,
յիսուն և չորս ամ վերստին.
անբախտ յաշորդ հօրըն գահին.
խակ Արտավազդ որդի սորին.
որ ծառաէր որովայնին.
և նախատինք իւրոյ յազգին»:

Անակի՝ Խոսրովու սպանությունից հետո, նա գնում է անիշխանության շրջան մինչև Տրդատը՝

«Եւ անհնօր հայք անտիրին.
կոխան ազգից պարսից լինին.
Մինչ ի գալուստն որդոյ նորին,
Տըրդատ անուն հազթող կայսրին»:

Անցնելով Մարգարանության շրջանին,

նա շարունակում է նոր վերնագրի տակ «Ի
զրաւ Արշակունեաց, նստին իշխանք», և
սկսում՝

«Երեք տասան ամ անտիրին,
յայլասեռից իշխեալ լինին,
կոխան ազգաց բազմաց լինին,
հազարացուց, պարսից և յունին:

Յետ այսորիկ դարձեալ վերըստին,
թագաւորաց մերոց լինին,
նախաժառանգ յայնքմ գահին,
Աշոտ ազգաւ Բագրատունին:

Արքունական տեղ պատրաստին,
ի բուն հայոց բաժնի մասին,
Շիրակվանայ մեծի դաշտին,
քաղաքն ունի յեզրը գետին:

Բագրատունեաց վերջին թագավորի, Գա-
ղիկի սղանության մասին, ժամանակագիրը
գրում է.

«Սա մեռանի կըսկծազին,
ձեռամբ զըժնեա յունաց ազգին,
Մինչև այս վայր տեալ մնացին,
Բագրատունեաց ազգն որ ասին»:

Բագրատունիներին նա սերում է հրեաներից՝

«Յազգէն հրէից գոլին սոցին,
Պատմէ Մովսէս Սորենացին,
քան զի Տիրբան արքայն միջին,
որդի քաջին Արտաշիսին:

Սա արշաւէ ի Պաղեստին,
Գերէ զբազումս ի հրէից ազգին,
Բագրատունիք անտի սերին,
Թագաւորաց մեր յարին»:

Որպես ազացույց նա հիշում է՝

Ուստի նշանք յայանի ցեղին,
որ զկերպս անուանցն ոչ փոխցին,
զՇամբաան՝ Սըմբատ անուանիցին՝,
զԱսուան՝ Աշոտ յարմար ձայնին:

Բագրատունիների նկարագրությունը
վերջացնելով, նա անցնում է Ռուբինյան-
ների շրջանին՝

«Պարոն Ռուբէն զարմէ Գաղկին,
զիշխանութիւն պահէ ազգին,
չուեալ յԱնուոյ տարագնային,
գայ ի յաշխարհ կիլիկէին:

Տիրէ տեղւոյն իշխանային,
դոյնս հալածէ ի տույժ Գաղկին,
կըրկին տամեակ ամք զըրաւին,
փոխի աստեացն քաջ և արին»:

Այնուհետև նկարագրվում է կիլիկյան
բոլոր թագավորները մինչև Լևոնը, որին նա
«Ողորմելի» մականուն է տալիս՝

«Յետ կոստանդնա որ հուսկ հեաին,
Լէօն արքայ Ողորմելին,
տիրեալ ամխըս տասն և մին,
կորոյս ըզթագն ընդ աթոսին:

Քանզի սուլթանն Եգիպտոսին,
եկեալ գերեաց զամենեսին,
զպարոնն և զիւրսն ի միասին
և զթագուհի մօրու նոցին»:

Ժամանակագրությունը վերջացնում է
1374 թվականով՝

«Ի յութ հարիւր հայոց թըվին,
քըսան և երեք աւելորդին,
յազգին զըժնեայ հազարձին,
բաժակըս դայս արբին:

Եւ աստանօր բանքըս վերջին,
պատմարանելքըս զըրաւին:
Արքայք և պեաք մեր ըսպառին,
իշխանքագունք մերոյ բառնին»:

Ամենից վերջում հիշատակում է իր գրե-
լու ժամանակը.

«Յինէն ընծայ այս քեզ եղբայր,
Մերոյ նախնեացըս վէպ և ճառ,
Մարտիրոսէ յոգնաթըշուառ,
շըջարերեալ թիւս է ծիծառ* (թերթ
199 ր):

№ 1151 (է 1138) ժամանակագրություն հայ
կաթողիկոսների՝ (Լուսավորչից մինչև
Մխիթար Գոհերեցը):

Վերնագրված է. «Շարադրություն հայ-
րապետացն հայոց»:

Սկս. թերթ. 232 ր՝ «Արդ ի համբարձ-
մանն տեառն մերոյ յերկինս. տր. Դրխոր...»
Վերջանում է թերթ 237 ր՝ «Տէր Մխի-

* «Ծիծառ» թվականը հավասար է Ծ (50) + Ի
(20) + Ծ (50) + Ա (1) + Ռ (1000) + 551 = 1672 թ.

Թար ի Գոներուն եպիսկոպոս՝ նստաւ յաթոս հայրապետութեան փոխանորդ նորա»:

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երկն Բյուսուկանցը Կ. Պոլսում 1693 թ.:

№ 1151 (է 1138) Համառոտ ժամանակագրություն Փոքր Ասիայի պատմության (1018—1594 ր. ր.):

Վերնագրված է. «Թուականաբար պատմություն կարն ի կարևոյ գիտարիւն անցելոց ժամանակաց»:

Սկս. թերթ 291 ա՝ «Ի թվին Հայոց. Նկէ. զարթեան աստուածասասա բարկութիւնն. ելին ազգն թուրքաց ի վերայ ազգին քրիստոնէից և կոտորէին անողորմ ի Վասպուրական...»:

Բովանդակութեամբ նմանվում է № 3078 ձեռագրի ժամանակագրութեան տեքստին, սակայն վերջում ժամանակագիրն ավելի ընդարձակ կանգ է առել սուլթան Մուրադի թագավորութեան վրա՝ նկարագրելով նրա թուլութեան հետևանքով սկսված միջֆեոզալական կռիվները և երկրի ծայր աստիճան քայքայվածութեանը:

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երկն Բյուսուկանցը Կ. Պոլսում 1693 թ.:

№ 1511 (է 1138) Ժամանակագրություն Գրիգոր Կամախեցու (1252—1603 ր. ր.):

Վերնագրված է. «Թարեխ սանկաց»:

Սկս. թերթ. 293 ր՝ «Այլի Օսման խան ելեր է, Կ տարի թագաւորէ. թվ. ՉԱ. Ուրախան նստի է, Իթ ամ թագաւորէ...» Վերջ. թ. 295 ա՝ «Թվ. ԽԾԲ. որ ես Գրիգոր բանի խնդրոյս, ելի յԱրարատեան յերկրէն ի յերկիրս Խախտեաց, որ այժմ Բարեբթ ասի՝ առ ոտս երջանիկ հօրն մերում, եռամեծին և ախեղերալոյս վարդապետին Սրապիոն քաջ հետորին...»

Ժամանակագրութեան մեջ հետաքրքիր տեղեկութեաններ է տրված հատկապես 1600 թվ. սովի վերաբերյալ «... ոմն երէց Երզնկացի Ենովք անուն՝ ի զեղջէն Շողայու, պատմեաց մեզ, թե յԵրզնկու ելայ՝ մինչև յԱրզրում և մարդ մեռած տեսայ, որ ի սովոյն անկեալ էին ի վերայ ճանապարհին»:

մինչ զի Ա. սոմար ցորեանն. Ը. դուռ էլաւ ու չէր գուիր...» (թ. 294 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Կոմիտաս երկն Բյուսուկանցը Կ. Պոլսում 1693 թ.:

№ 1256 (է 1291) Համառոտ ժամանակագրություն Կիլիկյան իշխանների և քաղաքների՝ սկսած Ռուբեն իշխանից, վերջացրած Լեվոնի որդի Հեթում թագավորով:

Վերնագրված է. «Յաղագս յսկզբան քաղաւորացն Կիլիկեցոց»:

Սկս. թերթ. 194 ա՝ «Առաջին քաջ և արի իշխանն Ռուբէն ազգական էր մեծ թագաւորին հայոց Գագկայ...»:

Վերջանում է թերթ 194 ր «... յետ սորա (այսինքն Լևոնի Ա. Ա.) թագաւորեաց որդին իւր Հեթում, որ դոտանաւորն շարազըրեաց զկնի իւրն»:

Ձեռագիրն ընդօրինակել է Հովհաննես Հիզանցին 1633 թ., Երուսաղեմում:

№ 1483 (է 1671) Համառոտ ժամանակագրություն Արեակունիների և Բագրատունյաց՝ Մովսէս-Երզնկացու:

Վերնագրված է. «Վասն քաղաւորացն հայոց, զոր կարգեաց Մովսէս եորեմացին»:

Սկս. թերթ 126 ա «Մովսէս Խորենացին զշարս թագաւորացն հայոց այսպէս կարգեաց.

Յարէթ, որդի Նոյի.
Գամեր.
Թերաս...»

Վերջանում է թերթ 128 ա՝ «Կոստանդին յայլմէ ազգէ որ այժմ ունի զթագաւորութիւն մինչև յայս վայր և ի թիւս հայոց ՊԸ միահամուռ թագաւորք հայոց ՀԱ»:

Ընդօրինակել է Մկրտիչ Զուղայեցին Եվզոկիայում 1687 թ.:

№ 1495 (է 1779) Համառոտ ժամանակագրություն հայոց և պարսից պատմության: Հավանական է կազմված է գրչի, Եփրեմ վարդապետի կողմից:

Վերնագրված է. «Կարգ թագաւորաց ազգիս հայոց և պարսից՝ թէ ուստի սերեալ թագաւորեցին»:

Սկսում է Աղեքսանդր Մակեդոնացուց. «Աղեքսանդր թագաւոր Մակեդոնացի յաղթեալ զԴարեհ արքայն պարսից, և փոխեաց առ ինքն զթագաւորութիւնն պարսից...» (թերթ 86 ր):

Ժամանակագրական հետևողականութեամբ նա թվում է Արտաշեսյան և Արշակունի թագավորներին, Նալիֆաթի շրջանում գործող կարևոր իշխաններին: Բազրատունյաց հայ թագավորներին և Ռուբինյան հայ թագավորներին և իշխաններին: Վերջում նա թվում է անիշխանութեան ժամանակը և վերջացնում 1679 թվով. «Իսկ ի վերջնոյ ամէ հինգերորդի Լևոնի թագաւորին Սըսոյ մինչ ցառ մեզ են ամբ. ԳճՆԳ: Եւ ի Քրիստոսէ մինչև ցառ մեզ են ամբ ՌՌՀԹ (=1679) և հայոց՝ ՌՃԻԸ» (թերթ 87ա):

Ձեռագիրը գրվել է Եփրեմ վարդապետի կողմից Կ. Պոլսում, 1679 թ.:

№ 1495 (է 1779) Ժամանակագրություն Բյուզանդական կայսրների:

Վերնագրված է. «Կարգ քաղաւորացն Հռոմայ՝ որք և ի Կոստանդնուպոլիս»:

Սկսում է Կոստանդիանոս Մեծից. «Կոստանդիանոս Մեծն սկսաւ յամս տեառն ԳՃԻԳ (=324) ինքնակալեալ ամս Լ, ամիսս Ժ, և աւուրք ԺԱ...» (թերթ 131ա):

Ժամանակագրութեան մեջ հաջորդականութեամբ թված են գրեթե բոլոր կայսրները մինչև Հովհաննես պալեոլոգը և նրա եղբայր Կոստանդիանոսը: Վերջացնում է Պոլսի գրավումով. «Եւ եկեալ սուլթան Մուհամէտն յէտրէնու յերկու ամի իշխանութեան իւրոյ և էառ զԿոստանդնուպոլիս, և թագաւորն Կոստանդին ի մարտին անկեալ մեռանի և անյայտ լինի, ոչ ոք զիտելով զնա թագաւոր, և ուր անոր մահն նորա՝ անգիտելի: Եւ կոչեցին զքաղաքն Իստամպուլ մինչև ցայսօր ժամանակի: Եւ էր թուականն ինն հարիւր և յերկու ամն հայոց» (թերթ 131):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (է 1779) Ժամանակագրական ցանկ արեգակի և լուսնի խավարումների:

Վերնագրված է. «Յաւարմունք արեգական և լուսնի անաղալապէս յէֆէմէրեաէս զրոցն ֆռանկաց»:

Սկսում է 1671 թ. խավարումներից «Ի թուականիս մերոյ հազար հարիւր քսանին (=1671 թ.) (քանիք ամսոցն մերս է որովք վարիմք և ոչ ֆռանկաց) խաւարումն արեգական մարտի ԻԹ, ԻԳ ժամին. ԻԹ տախիխային: Ի սոյն ամի խաւարի լուսինն՝ սեպտեմբերի Ը, է ժամու, ԽԳ տախիխային...»:

Նման ձևով, ժամանակագրական կարգով, հեղինակը տալիս է երեսուն թվականների ընթացքում եզոյ արեգակի և լուսնի բոլոր խավարումները: Վերջացնում է 1700 թ. խավարումով. «ՌՃՆԹ: Յաւարումն լուսնի ապրիլի ԻԳ, Ի ժամուն, Ա տախիխային: Դարձեալ խաւարումն լուսնի ի սոյն ամի յօգոստոսի ԺԹ մէկ ժամն ԽԲ տախիխային. վերջացաւ զիրքն, որ ունի երեսնամեայ ժամանակ» (թերթ 131ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (=է 1779) Ոճանալօր ժամանակագրություն հայոց պատմության Մարտիրոս Արիմեցու:

Վերնագրված է. «Կարգ թագաւորաց ազգիս հայոց»:

Իր բովանդակութեամբ տառացի համապատասխանում է № 737 զրչազրի Մարտիրոս Արիմեցու ստանալոր ժամանակագրութեան տեքստին, «ուտի և ավելորդ կնք համարում նրա վրա մանրամասը կանգ առնել»:

Սկսվում է թերթ 141 ր, վերջանում 142ր: Ձեռագիրն ընդօրինակված է Եփրեմ վարդապետի կողմից, Կ. Պոլսում, 1684 թ.:

№ 1495 (է 1779) Համառոտ ժամանակագրություն Արեալուսիների, Բագրատունյաց, Կիլիկյան իշխանների և քաղաքների:

Վերնագրված է. «Թագաւորք Արշակունեաց»:

Սկսվում է Տրդատից. «Առաջին Տրդատ

ԾՁ ամ թագաւորեաց...» (թերթ 152 ա) վերջանում է Կոստանդին կաթողիկոսով «Գարձեալ ի թուականին հայոց ԶԺ և ՀԳ, ի ժամանակի սուլտան Ալաաին իշխանին հոտմոց, յետ Յովհաննիսի, լինի կաթողիկոս Կոստանդին» (թերթ 152 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը Կ. Պոլսում 1684 թ.:

№ 1495 (է 1779) ժամանակագրական ցանկ միջնադարյան մի Եաբբ մասենագրերի՝ կազմված Մարտիրոս Ղրիմեցու կողմից:

Վերնագրված է. «Այս են կարգ վարդապետաց հայոց՝ ի Ղրիմիցի Մարտիրոս վարդապետէ գրեցեալ»:

Ցանկն սկսում է Մխիթար Գոշից. «Նախ Մխիթարն որ մականունն Գոշ կոչի: Նորին աշակերտն վանական: Նորին՝ Ներսէս Եսայեայ» (թերթ 172 բ):

Մատենագրերի ժամանակագրական ցանկը վերջանում է իրենով, ու իր աշակերտով. «Յովհաննէս Շնքուշցին: Նորին աշակերտ Աստուածատուր Մեծն սուրբ Երուսաղեմայ: Նորին աշակերտ Մարտիրոս Ղրիմեցին, պետն սրբոյ Երուսաղեմայ: Նորին աշակերտ՝ Եփրեմ երաժիշտն, պետն Անդրիանուպոլսոյ» (թերթ 173 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Եփրեմ վարդապետը 1684 թ.:

№ 1685 (է 1817) Համառոտ ժամանակագրության Արեւիկանիքի և Բագրատունյաց:

Վերնագրված է. «Վասն թագաւորաց հայոց զոր կարգեաց Մովսէս Խորենացին»:

Սկս. թերթ՝ 100 բ. «Մովսէս Խորենացի զարս թագաւորացն հայոց այսպէս կարգէ. Յարէթ. Գամբր. Թիրաս. Թորգոս. Հայկն...»:

Վերջանում է թերթ՝ 102 բ «... Ի թիւս Հայոց ՊԸ միահամուռք թագաւորք հայոց ՀԱ»:

Ընդօրինակված է 1649 թ. Թորոս գրչի կողմից:

№ 1723 (է 1710) Համառոտ ժամանակագրության հայ կաթողիկոսների:

Վերնագրված է Կարգ և թիւք կաթողիկոսաց և ամք նոցա»:

Սկս. թերթ. 131 բ. «Իա

ա	Գրիգոր Լուսաւորիչ	1
բ	Արիստակէս	1
գ	Վրթանէս	ԺԵ
դ	Յուսիկ	2
ե	Փանսերսէս	Գ...»:

Տրված է Առաքել Դավրիժեցու հեղինակած թղթով՝ հասցնելով մինչև 1733 թ. Արրահամ Կրեաացու մահը «Տէր Արրահամ Աղձնեաց ի Քեղ դաւառէ և ի Նարան գեղջէ ի ՌՃՀԹ թվին եղև կաթողիկոս... Սա վախճանեցաւ՝ վարեալ զկաթողիկոսութիւնն՝ ամս Գ»:

Ժամանակագրության ծավալը 11 էջ է: Շարադրված է հարյուր քսան կաթողիկոսների ժամանակագրությունը՝ սխեմատիկ ձևով:

Ձեռագիրն ընդօրինակել է Դադար քահանան նոր Չուղայում 1696 թ.:

№ 1771 (է 1712) Համառոտ ժամանակագրության Փոքր Ասիայի պատմության Անխորագիր:

Սկս. թ. 226 ա՝ «Ի թվին հայոց. ՆԿէ. զարթեալ աստուածասասա բարկութիւն. և ելին ազգն թուրքաց ի վերայ քրիստոնէից ի Վասպուրական...»:

Նմանվում է № 3078 ձեռագրի ժամանակագրությանը:

Վերջանում է. «ՌԾ. թվին. թալանեց և կողոպտեց Լաւէնտն զՄիս քաղաքն Կիլիկոյ: Ի ՌԾԱ. թվին զԹուխաթն քաղաքն այրեցին» (թերթ 227 ա):

Ձեռագիրն ընդօրինակել է Վարդան երեցը 1651 թվ.:

№ 1786. ժամանակագրական սխեմա օսմանյան պատմության (սկսած սուլթան Օսման Դաղիից, վերջացրած սուլթան Ահմեդով) «Սուլթան Ահմէտ իպնը Մըհամէտ խան»: Այս սխեման կազմել է Ստեփաննոս Գալանցին՝ Երեմիա Քեոմեքճյանի «Թագաւորութիւն օսմանցոց համառոտիւ պատմութեան» աշխատության հիման վրա: Ժամանակագրական սխեմայի սկզբում, ձախ լուսանցքում, կա այսպիսի մի հիշատակութիւն «Այս գեղեցկացուցանօղն Դաշտեցի

ամենահանձար պարոն Սահփաննոսն է» (թերթ 36 բ), որից պարզում է, որ սխեմայի հեղինակը Սահփաննոսն է: Ինքը, Սահփաննոսը, Երեմիա Բեռնիքյանի պատմության վերջում և իր սխեմայի սկզբում, թողել է հետևյալ հիշատակութունը. «Մինչև ցատտ Երեմիա Չելապոնցի գրեալ և վճարեալ էր, թէպէտ և մեք ըստ կարոյն մերոյ գեղեցկացուցաք զպարագրութիւնս և ըստ քերթողութեան տառից ևս զոյնն ինչ վայելչացուցաք որպէս և կարէք տեսանել ընդ հեղինակին զփորձառուլ» (թերթ 36 բ):

Ժամանակագրական սխեմային նախորդում է հինգ տող տեղեկութուն Ահմեդ սուլթանի մասին, որից հետո ընկել է երեք թերթ:

Սխեմայում, յուրաքանչյուր սուլթանի համար, տալում է թե նա քանիերորդն է դահում, ում աղան է, արվում է նրա ամենակարևոր և բնորոշ գործերը, երբ է ծնվել, երբ է դահակալել, որքան է նրա գահակալության տարիները և որքան կյանք է ունեցել:

Սխեման վերջանում է սուլթան Ահմեդով՝ «Սուլթան Ահմեդ իպնը Մըհամէտ խան. 23 (այսինքն՝ 23-րդ — Ա. Ա.)» (թերթ 40 բ):

Չևապիրն ընդօրինակել է Մարտիրոս Դի Առաքելը 1723 թ.:

№ 1786. Ռամալոր ժամանակագրությունի Օսմանյան Պատմության:

